

«Ճանապարհային օժանդակություն» ծառայության կանոնները և սակագները



1. «Ճանապարհային օժանդակություն» ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) նախատեսում է Քարտատիրոջ պատվերով ավտոմեքենայի տարհանման ծառայության մատուցում 33 տարածքում:

2. Ծառայությունը Քարտատիրոջը հասանելի է շուրջօրյա և իրականացվում է բացառապես վերջինիս կողմից (010) 31 99 99 հեռախոսահամարով զանգահարելու միջոցով կատարված պատվերի հիման վրա:

3. Ծառայությունը Քարտատիրոջը մատուցվում է անվճար տարին մինչև 2 (երկու) անգամ, միայն Երևան քաղաքի տարածքում և սույն պայմանների 4 կետում սահմանված դրույթների ապահովման պայմանով: Տարվա հաշվարկը կատարվում է Քարտը ձեռք բերելու օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի հիմքով և շարունակվում սույն սկզբունքով:

4. Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված են հետևյալ պայմանները.

ա) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունը տարհանման ենթակա ավտոմեքենայի գտնվելու վայրում և իր American Express Blue քարտի կամ անձը հաստատող փաստաթղթի առկայությունն իր մոտ Ծառայության մատուցման պահին, ինչը նախապես հաստատվում է Քարտատիրոջ կողմից պատվեր կատարելիս, այնուհետ ստուգվում նշված հասցեով ավտոմեքենայի տարհանման նպատակով ուղարկված քարշակ մեքենայի ժամանումից հետո՝ քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Բանկ զանգահարելու և Բանկի կողմից Քարտատիրոջ ինքնությունը հաստատելու միջոցով:

բ) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունն ավտոմեքենայի տարհանման վերջնակետում, ինչը հաստատվում է քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Ծառայության մատուցման ստացականի լրացման և Քարտատիրոջ կողմից ստորագրման միջոցով:

5. Սույն կանոնների 3 կետում սահմանված պատվերների քանակը գերազանցելու, 4 կետում սահմանված պայմանները չապահովելու, ինչպես նաև Երևան քաղաքից դուրս Ծառայության պատվերների դեպքերում Քարտատերն իրավունք ունի օգտվել Ծառայությունից՝ Ծառայությունը մատուցած ընկերությանը Ծառայության արժեքն իր կողմից վճարելու և դրա մասին պատվերի իրականացման պահին իր ցանկությունը Բանկին նախապես հայտնելու պայմանով:

6. Ծառայության արժեքը Քարտատիրոջ կողմից վճարելու պայմանով Ծառայությունից օգտվելու սակագները սահմանվում են Բանկի կողմից և հրապարակվում www.americanexpress.am կայքում:

7. Բանկն իրավունք ունի չմատուցել Ծառայությունը Քարտատիրոջը, կասեցնել Ծառայության հետագա մատուցումը կամ դադարեցնել American Express Blue քարտի և Քարտատիրոջ հետ կնքված American Express Blue վարկային քարտով տրամադրվող վարկային գծի պայմանագրի գործողությունը և պահանջել Քարտատիրոջից վերադարձնել քարտը Բանկին հետևյալ դեպքերում.

ա) եթե առկա է Քարտատիրոջ կողմից Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պայմանների միտումնավոր խախտման կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

բ) եթե առկա է Բանկին խեղաթուրված, կեղծ տեղեկատվության տրամադրմամբ պատվերների կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք,

գ) եթե առկա է Ծառայությունից անվճար օգտվելու սեփական հնարավորություններն այլ անձանց օգտին որևէ այլ շահ հետապնդելու նպատակով կամ անշահախնդիր օգտագործելու կասկած կամ Բանկին հայտնի դարձած հանգամանք:

Սակագներ

— Երևան քաղաքի սահմաններում մինչև 5 կմ- 4 800 ՀՀ դրամ

— Երևան քաղաքի սահմաններում 5 կմ-ից ավել- 7 200 ՀՀ դրամ

— Երևան քաղաքի սահմաններից դուրս մինչև 50 կմ- 15 000 ՀՀ դրամ

— Երևան քաղաքի սահմաններից դուրս 50 կմ-ից մինչև 100 կմ- 20 000 ՀՀ դրամ

— Երևան քաղաքի սահմաններից դուրս 100 կմ-ից մինչև 120 կմ- 25 000 ՀՀ դրամ

— Երևան քաղաքի սահմաններից դուրս 120 կմ-ից ավել- 1 կմ 170 ՀՀ դրամ

